

րօնացւոյն քով յիշուիլը ճշդելի կերակրոյ մը, երբ յոյն քահանայից անարժանաբար մատուցած խորհրդոյն համար կ'ըսէ, «Թուրքին յղմանն՝ լաւ է քան զայն պատարագն» (Թէոփ.)։ Եւ որ զուցէ Հայոց ալ էր։ Բայց ազնուականաց սնունդն աւելի որոշ է, զոր պիտի տեսնենք իւր կարգին։

Ե. Սակայն դրամին հակառակ երեսն ալ կայ։ Լեռնցի շինականին սեղանը զուրկ էր դաշտայնոց զանազանութենէն, եւ շատ ժուժկալ ու չոր, մանաւանդ թէ կիսավայրենի բան մը, դատելով՝ զոր օրինակ՝ Սասնեցւոց սովորութենէն, որոնք ըստ Արծրունոյն՝ «զպէտս կերակրոցն վճարեն ի սերմանց ինչ, առաւել ի կորեակ կոչեցեալ սերմանէն, զոր ոմանք ի սով ժամանակի հաց անուանեն» (134)։ Վերջինս իմանալի է՝ թէ ուրիշներ ալ սովի առթիւ անկից հաց կը շինէին։ Եւ արդարեւ ասոր օրինակներ շատ ունինք։ Եւ դարու արսորական նախարարաց փափկակեր ընտանիքները չքաւորութեան մատնուած, «փոխանակ նաշոյ կորեակ ուտէին, կ'ըսէ Փարպեցին, եւ փոխանակ պարզ գինւոյ՝ ջուր չափով ըմպէին» (331)։ Կամ ըստ Եղիշէի՝ «խոտաբուտ կենօք իբրեւ զվայ-

1. Պրս. «քիւրմաճ. է տեսակ իմն կերակրոյ» (Գ. Դպ.)։